№ 14 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 30

1904
ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 30 № 14

Մարիամ և Ստեփան Մասեանցները, Սաթենիկ Անդրէասեանցը, Հայկանդուխտ Դաւթեանցը, Ստեփան Անդրէասեանցը և Լևոն Դաւթեանցը ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին առաջինները իրանց անմոռանալի որդու, երկրորդների սիրելի եղբօր, երրորդների աներջ-որդու, Բաղուի գիմնազիայի VI դասատան աշակերտ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՍԵԱՆՑԻ

անփոխարինելի մահը, որ տեղի ունեցաւ երեք ամվայ հիւանդութիւնից յետոյ, յունվարի 27-ին: Յուղարկաւորութիւնը կը լինի վաղը, շաբաթ օրը, յունվարի 31-ին Մէյդանի վրա Саядовскій переулокъ, տուն Բաբայեանի № 201, դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին. թաղումը Խոջիվանքի գերեզմանատան: Անբիծքը կը լինի այսօր, երեկոյեան ժամը 6-ին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուս-եապոնական պատերազմը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գրիբոյեդով. Մի լուսանկարչական ժողովածու. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էմմանուէլ Կանտ. Հեռաւոր Արևելքում. Պատերազմի շուրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՌՈՒՍ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատմական տարեգրութիւնների մէջ մտաւ մի նոր խոշոր պատերազմ, որ յայտնի պէտք է լինի ռուս-եապոնական պատերազմ անունով:

Ռուսաստանը և Եապոնիան, որոնք միայն մի երեք-չորս տարի սրանից առաջ միասին, միմեանց ձեռք տուած, իբրև զինակիցներ, կուում էին Չինաստանի դէմ, այսօր իրանք, իբրև հակառակորդներ, դուրս են բերել միմեանց դէմ զօրքերի անգին բանակներ և նաւատորմներ, լարում են իրանց բոլոր ոյժերը կարելիին չափ խիստ հարուածներ հասցնելու միմեանց և ձգտում են մէկը միւսին թուլացնել իրանց գերիշխանութիւնը ընդարձակելու նպատակով: Իսկ Չինաստանը, որ մի ութ տարի սրանից առաջ կուում էր Եապոնիայի դէմ, և մի երեք տարի առաջ եւրոպական պետութիւնների և նրանց թւում Ռուսաստանի դէմ, այսօր կանգնած է մի մեծ հարցի առաջ՝ ինչ անել, Ռուսաստանին թէ Եապոնիային համակրել և անհրաժեշտութեան դէպքում նրանց որին արդեօք աջակցութիւն ցոյց տալ:

Առ այժմ Չինաստանը չէզոքութիւն է պահպանում: Բայց կը ճանչ արդեօք չէզոք դրութեան մէջ մինչև վերջը, թէ որ և է ձևով կը միջամտէ նա պատերազմական գործողութիւններին՝ ցոյց կը տայ մերձաւոր ապագան:

Այսօրվայ հեռագիրները տեղեկութիւն են տալիս, որ Ֆրանսիան և Ամերիկայի Միացեալ-Նահանգները կը պահպանեն չէզոքութիւն: Ֆրանսիան, որ Ռուսաստանի զինակիցն է եւրոպական որոշ ընդհարումների դէպքում, պարտաւոր չէ Հեռաւոր Արևելքում միանալ Ռուսաստանին, բայց պահպանելով լիակատար չէզոքութիւն, նա յոյս ունի, որ դրանով նա դարձեալ օգնած կը լինի իր դաշնակից Ռուսաստանին, հեռացրած լինելով մի անգամ ընդ միշտ այնպիսի համախմբումներ, որոնք կը ձգտէին խառնել Ֆրանսիային հակառուսական շարժումների և գործողութիւնների մէջ: Ֆրանսիան չի ցանկանայ, որ իր դաշնակից Ռուսաստանը թուլանայ, որովհետև երկու պետութիւնների մէջ տեղի ունեցող դաշնակցութիւնը տալիս է էական շահեր երկու կողմերին էլ սիջազգային համերգի մէջ և որոշ ձևով պահպանում է հաւասարակշռութիւն մեծ պետութիւնների ազդեցութեան և հեղինակութեան շրջանների մէջ: Ճիշտ է, Ֆրանսիան ունի իր սեփական շահերը Հեռաւոր Արևելքում, բայց նա յոյս ունի, որ այդ շահերը պաշտպանված կը լինեն արժանաւոր կերպով և վտանգի չեն ենթարկվի իրապէս:

Միացեալ-Նահանգները միշտ պահանջել են, որ Հեռաւոր Արևելքը մնայ ազատ նրա առևտրի համար, լինելով այն, ինչ որ յայտնի է «ազատ դռներ» անունով և նա ձայն կը բարձրացնէ միայն այն դէպքում, երբ նկատէ, որ նրա շահերին վտանգ է սպառնում և նրա առևտրին արգելքներ ու խոչնդոտներ են հանդէս բերում Հեռաւոր Արևելքում:

Ինչ վերաբերում է Անգլիային, որ Եապոնիայի հետ ունեցած դաշնակցութեամբ պարտաւոր է օգնելու որոշ դէպքերում, առ այժմ պահում է իրան հեռու որ և է միջամտութիւնից:

Պատերազմը սահմանափակված է այդպիսով միայն Ռուսաստանի և Եապոնիայի մէջ: Երկու կողմի զօրքերն էլ սկսում են ցամաքով մօտենալ միմեանց: Ռուսաց զօրքերը Մանջուրիայից և Կվանտունի թերակղզուց շարժվում են դէպի Կօրէայի սահմանները, եապոնական զօրքերը նաւերով տեղափոխվում են Կօրէա՝ գնալու ռուսական բանակների դէմ: Ցամաքի ընդհարումները տեղի կունենան փոքր ինչ ուշ, երբ երկու կողմի բանակները կը սկսեն միմեանց հանդիպել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԻԲՕԵԴՕՎ

(Նրա մահվան 75-ամեակի առիթով)

Այսօր, 1904 թ. յունվարի 30-ին, լրանում է եօթանասուն և հինգ տարի այն օրից, երբ Թէհրանում, Ֆաթալի-Շահի օրով, պարսիկ մոլեռանդ ամբոխը սպանեց Ռուսաստանի լիազօր դեսպան, բանաստեղծ Ալէքսանդր Սերգեէվիչ Գրիբոյեդովին, 31 տարեկան հասակում: (Նա ծնվել էր 1798-ին): Վայրենացած ամբոխը ոչ միայն սպանեց նրան, առաջուց բազմաթիւ վերքեր հասցնելով, այլ և սպանութիւնից յետոյ ամբողջ երեք օր քարշ տուեց նրա մարմինը Թէհրանի փողոցներով և ձգեց յետոյ մի փոսի մէջ, սպանված միւս ռուսների—դեսպանի պահակախումբ կոզակների—դիակների հետ միասին: Այդ անլուր ոճրագործութիւնից յետոյ, շնորհիւ կենդանի մնացած մի քանի հայերի, Գրիբոյեդովի մարմինը, գրեթէ բոլորովին անճանաչելի դարձած, ճանաչվեց, բերվեց Թաւրիզի վրայով Նախիջևան քաղաքը, պահվեց մի շաբաթ այդ քաղաքի հայոց եկեղեցում և ապա բերվեց Թիֆլիս, ուր իր մշտական հանգիստը գտաւ ս. Դաւիթ սարի լանջի վրա գտնվող Մթածմինդայի վանքում, որ Թիֆլիսցիների ուխտագնացութեան և զբօսանքի հաճելի վայրն է կազմում մանաւանդ գարնան և ամառվայ ժամանակ:

Գրիբոյեդովը նշանակութիւն ունի մեզ համար ոչ միայն իբրև բանաստեղծ (նրա գլխաւոր աշխատութիւնն է «Горе отъ ума» կոմեդիան, որ թարգմանված է և հայերէն), այլ և իբրև մի պատմական գործիչ, որի անունը և գործունէութիւնը սերտ կերպով կապված է Կովկասի պատմութեան և, մասնաւորապէս, հայ զերեալների պատմութեան հետ: Նրա սպանութեան պատմութիւնը և յարակից պայմանները մինչև այսօր ևս ճշդիւ չեն լուսաբանված: Պարսից պատմագիրները և պաշտօնական դոկումենտները յօրինված և յերիւրված են միայն այն նպատակով, որ արդարացնեն պարսիկներին և մեղադրեն Գրիբոյեդովին, որը, իբր, իր յանդուգն վարմունքով և Շահի հարէմում սարքած բօսանտիական արկածներով գրգռել էր պարսիկ խուժանի կրօնական ժողովանդութիւնը: Գալով ռուսաց պաշտօնական դոկումենտներին, դրանք որքան էլ բացատրում են մեզ սպանութեան գլխաւոր հանգամանքները, բայց դարձեալ նրա իսկական պատճառների և ցաւալի դէպքի մանրամասնութիւնների մասին շատ քիչ բան են ասում:

Այդ վերջին թերութիւնը կարող են լրացնել, ի հարկէ, սպանութեան ականատես վկաները և Գրիբոյեդովի հետ մօտ յարաբերութիւն ունեցող անձինք, որոնց պատմածը, բարեբախտաբար, գրի են առնված հանգուցեալ Գալուստ Շերմազանեանցի ձեռքով, իսկ ականատես վկաների մէկի պատմածը ևս ինքս եմ լսել իր՝ վկայի բերանից: Այդ վկաներից շատերը մինչև վերջերս ևս կենդանի էին. դրանք են, 1) Թաւրիզցի հայ Համբարձումը, կոչված Իբրահիմ-բէկ, ռուսաց դեսպանատան դուլատ, որ Գրիբոյեդովի հետ վիրաւորվելուց յետոյ, կիսակենդան ընկած մնացել էր սպանվածների դիակների մէջ և մի տեսակ հրաշքով ազատվել էր. նրա դիակի վրայով միայն խուժանը կարողացել էր հանել դեսպանին և սպանել նրան: Իր այդ հաւատարիմ ծառայութեան համար Համբարձումը մինչև մահը տարեկան 120 հոլլանդական ոսկի թոշակ էր ստանում ռուսաց կառավարութիւնից. 2) հայ սպայ Եաղուբ, սուլթանի (մայօրի) աստիճանով, որ իր ատորադրեալ զինուորականներով սպանութեան օրը, այն է 1829 թ. յունվարի 30-ին, օրապահ էր դեսպանատանը. 3) Թէհրանի Շահ-Աբդլ-Ազիմ թաղի հայոց եկեղեցու երէցփոխ Խուդադատը. 4) Ֆաթ-Ալի-Շահի հարէմխանի (կանանոցի) գանձապետ հայ Միրզա Եաղուբը, որը և եղաւ ցաւալի դէպքի գլխաւոր ատիթը. 5) Թաւրիզցի Մելքումը, յետեալ Միրզա Եաղուբի գործակատարը. 6) Թիֆլիսցի Յովհաննէս Մանթաշեանը, այժմեան դրամատէր Ալէքսանդր Մանթաշեանի հայրը. 7) Մատեոսի Եղօ Մարգարեան և 8) պարսիկ Եավար (պօրուչիկ) Փաշաբէգը:

Այս ականատես վկաների ցուցմունքը և պատմածները մինչև այսօր անծանօթ են մնացել ռուսաց կենսագրողներին. նրանք ոչ միայն լրացնում են պաշտօնական դոկումենտների թերութիւնը, այլ և շատ բան են բացատրում, շատ բան են ուղղում և արդէն հիմնվելով այդ ցուցմունքների ու պատմածների վրա, կարելի է Գրիբոյեդովի սպանութեան դէպքը, իր բոլոր յարակից պարագաներով, ամբողջութեամբ և մանրամասնօրէն վերականգնել ու միանգամայն լուսաբանել պատմութեան այն էջը, որ մինչև այսօր մութն է համարվում հռչակաւոր հեղինակի կենսագրողների կողմից:

Մենք, յարմար ատիթով, կը ծանօթացնենք այդ կենդանի վկայութիւնների հետ և կը վերականգնենք եօթանասուն և հինգ տարի մեզանից առաջ տեղի ունեցած սարսափելի դէպքի ամբողջ պատկերը:

Պարսկաստանը, կատարելով միջազգային օրէնքների դէմ այդպիսի մի անլուր ոճրագործութիւն, ինչպէս դեսպանի սպանութիւնը, անպատիժ մնաց սակայն, որովհետև Ֆաթ-Ալի-Շահը ուղարկեց Պետերբուրգ, Նիկոլա I կայսրի մօտ իր որդի Խոսրով-Միրզա շահզադէին, 22 տարեկան և իր գեղեցկութեամբ հռչակաւոր մի երիտասարդ, որ պէտք է ժառանգէր և նրա գահը Աբբաս-Միրզայի մահից յետոյ: Նա ներկայացաւ կայսրին, ծնկաչոք, պարանոցը ձգած մի թուր, որի վրա գրված էր. «Քո դեսպանի կեանքի փոխարէն վերցրու իմ ամենասիրելի զաւակի գլուխը»: Նիկոլայ I վեհանձնաբար ներեց և հանելով թուրը երիտասարդ շահզադէի վզից, պարգևեց նրան թուրի հետ և կեանքը ու ներեց Շահին:

Եւ այսօր, երբ բովանդակ մտաւոր Ռուսաստանը յիշում է Գրիբոյեդովի նահատակութեան 75-ամեակը, մենք հայերս ևս, որոնց նա պաշտպանեց Պարսկաստանում և որոնց աշխատում էր ազատել գերութիւնից, երախտագիտական պարտք ունենք հատուցանելու բանաստեղծի և ազնիւ մարդասէրի աճիւններին: Ինչպէս 75 տարի առաջ, հայ եկեղեցին առաջինը եղաւ Թաւրիզում և Նախիջևանում, որ կատարեց քրիստոնէական եղբայրսիրութեան պարտքը, առաջին հոգեհանգիստը և քրիստոնէական աղօթքը կատարելով նահատակի դագաղի վրա, այսօր ևս հայ մտաւոր աշխարհը չէ կարող մոռանալ, որ Գրիբոյեդովը, իբրև մարդ, իբրև քրիստոնեայ չը զլացաւ սփոփել հայ տառապեալների վշտերը և այդ պատճառով նրա անունը երկար ժամանակ անջնջելի մնաց և այսօր ևս յիշվում է Պարսկաստանի հայութեան բազմաթիւ սերունդների մէջ:

Հ. Առաքելեան

ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Մշակի» մէջ մենք մի անգամ առիթ ենք ունեցել յիշելու մեր դերասանական խմբի անդամ և լուսանկարիչ պ. Վրոյրի մի լուսանկարչական ժողովածուն, որ ներկայացնում է Սանահնի վանքը և նրա շրջակաները: Ինչպէս երևում է, պ. Վրոյր նպատակ է ընտրել մեր պատմական բոլոր նշանաւոր յիշատակարանները այդպիսի ժողովածուներով հետզհետէ լոյս հանել, մի բան, որ, ի հարկէ, և ցանկալի է, և գովելի: Մենք այժմ ստացանք պ. Վրոյրի մի նոր ժողովածուն, որ կրում է «Ս. Էջմիածին և շրջակայքը» վերնագիրը:

Ժողովածուն պարունակում է իր մէջ 25 լուսանկարներ ստէրեոսկոպի համար և, ինչպէս ցոյց է տալիս վերնագիրը, պատկերացնում է Արարատեան դաշտի ամենանշանաւոր և հետաքրքրական այն կէտը, ուր Էջմիածնի վանքն է գտնվում: Մենք տեսնում ենք այդտեղ վանքի, ճեմարանի, միաբանութեան խուցերի, թանգարանի զանազան տեսարանները, ինչպէս նաև Ներսիսեան լիճը, անտառը, Գայիանէի և Հռիփսիմէի վանքերը:

Մենք պէտք է վկայենք, որ այդ բոլոր լուսանկարները պ. Վրոյր պատրաստել է բարեխղճութեամբ. գործի մէջ նկատվում է նրբութիւն, արուեստի կատարելագործութիւն: Պարոնը շատ ջանք է գործ դրել, որ պատկերները գոհացնեն մեր ժամանակի խիստ պահանջներին և չէ կարելի չասել, որ աւելի խնամքով և մաքուր բան հազիւ թէ կարելի լինի տալ, նկատի առնելով այն հանգամանքներն ու պայմանները, որոնց մէջ ստիպված է աշխատել մի աղքատ հայ դերասան, որին դրդողն ու առաջ տանողը լոկ սէրն է դէպի գործը: Մի քանի պատկերներ առանձնապէս աջողված են և մեզ վրա շատ լաւ տպաւորութիւն թողեցին: Այսպէս է, օրինակ, Ներսիսեան անտառը, Գամառ-Քաթիպայի արձանը ճեմարանի բակում, Էջմիածնի վանքի տեսարանը անտառից և այլն:

Առանձնապէս յիշատակելու արժանի են այն պատկերները, որոնք ներկայացնում են Զուարթնոց եկեղեցու աւերակները: Այդ աւերակները, ինչպէս յայտնի է, նոր են բացվել և իրանց հնութեամբ, ճարտարապետութեամբ և շրջապատող շինութիւններով էջմիածինը այցելողի համար ամենահետաքրքրական հնութիւններ են: Պ. Վրոյր այդ աւերակներից մի քանի տեսարաններ է տուել:

Ընդհանրապէս վերցրած, պ. Վրոյրի գործը թողնում է գեղեցիկ տպաւորութիւն և արժանի է ամեն խրախուսանքի: Գինը նշանակված է շատ մատչելի—25 պատկերի համար 6 ռուբլի: Աւելի էժան գին նշանակել անկարելի էր, այնպէս որ մեր հասարակութեանը մնում է խրախուսել այդ անխոնջ աշխատաւորին: Խրախուսել հարկաւոր է մանաւանդ այն պատճա-

ռով, որ պ. Վրոյը դեռ շատ բան ունի տալու։ Հարիւրաւոր պատկերներ է պատրաստել, որոնք մի շարք ժողովածուներ են կազմում։ Որպէս զի հասարակութեան միանգամայն մատչելի լինեն այդ ժողովածուները, պ. Վրոյը հրատարակում է նրանց մաս-մաս, նշանակելով էժան գին։

Հանգուցեալ Քիւրքճեանից յետոյ պ. Վրոյրն է, ինչքան յիշում ենք, որ աշխատում է հայ ընտանիքների սեղանի վրա դնել մեր հին աւերակ ու կանգուն յիշատակարանները։ Քիւրքճեանը շատ քիչ բան տուեց և նրա լուսանկարները այժմ շատ հազուագիւտ են. պ. Վրոյրը տալիս է անհամեմատ շատ՝ու շատ և արուեստի կողմից էլ միանգամայն գոհացուցիչ կերպով է կատարում իր դժուար, մի անապահով անհատին միանգամայն անմատչելի գործը։

Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Բարձրագոյն Մանիֆէստի հրատարակութեան և պատերազմի յայտարարութեան առիթով, երէկ, յունվարի 29-ին, Թիֆլիսի ռուսաց զինուորական Ալէքսանդրօվսկի-Նեվսկու մայր տաճարում տեղի ունեցաւ մաղթանք ռուսաց զօրքի յաղթութեան համար և կարդացվեց Մանիֆէստը։ Մաղթանքներ կատարվեցին արական և իգական գիմնազիաներում, որտեղ կարդացվեց Բարձրագոյն Մանիֆէստը և արտասանվեցին ճառեր պատերազմի յայտարարութեան առիթով։

—

Երէկ Թիֆլիսի փողոցներում տիրում էր զգալի կենդանութիւն պատերազմի յայտարարութեան առիթով։ Ձեռքից ձեռք էին անցնում հեռագիրները և լրագրական թերթերը և նիւթ ծառայում դատողութիւնների և զրոյցի համար։

—

Ինչպէս լսում ենք, Անդրկովկասեան երկաթուղու ծառայողներից շատերը սկսել են թողնել իրանց պաշտօնները և ճանապարհ ընկնել դէպի Անդրբայկալեան երկաթուղին, ուր նրանց առաջարկում են անհամեմատ աւելի ձեռնտու պայմաններ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում նորերս բացված մրգաբուծական ընկերութիւնը վճռել է ամեն կերպ աջակցութիւն ցոյց տալու մեր երկրի այգեգործներին իր խորհուրդներով և հրահանգներով ձրիապէս։ Ով որ այգեգործներից ցանկանում է խորհուրդ հարցնել իր տընտեսութեան այս և այն կարիքների մասին, կարող է դիմել յիշված ընկերութեան, որը կը շտապէ պատասխանել անմիջապէս։ Ցանկացողները կարող են դիմել կամ ընկերութեան վարչութեանը կամ Գիւղատնտեսական թերթի միջոցով, որ կը յանձնէ հարցեր ընկերութեան գրասենեակին։

—

«Кавказъ» պաշտօնական թերթը հաղորդում է, որ Բագուի նահանգապետ գէներալ մայոր Օդինցովը նշանակվել է հրամանատար Կովկասեան գրանադերեան զօրաբաժնի դիվիզիայի։

—

Թիֆլիսի ձիաքարշ երկաթուղու գծի վրա վերահսկող յանձնաժողովի նախագահ պ. Սուլխանովը, քննելով Աւչալեան գիծը, գտել է նրան անկարգ դրութեան մէջ, իսկ ձիերը անպէտք։ Նա ներկայացրեց մասնաժողովին իր դիտողութիւնները։ Վերջինս որոշեց մի ամիս ժամանակ տալ տէրերին կարգի բերելու գիծը և փոխելու ձիերը, իսկ քաղաքային տեխնիկին պատուիրել հսկելու գիծը կարգաւորելու ժամանակ։

—

«Нов. Обоз.»-ին գրում են Ալէքսանդրոպոլից, որ քաղաքն ամեն տարի 3,500 ռուբլի ծախսում է ընդհանուր պետական ոստիկանական հիմնարկութիւնները քաղաքում պահելու համար։ Վերջին ժամանակներս շատ քաղաքներ այդ ծախքից ազատվել են։ Այժմ Ալէքսանդրոպոլի քաղաքային վարչութիւնը խնդիր է ներկայացրել այդ ծախքից ազատվելու համար։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր հայոց եկեղեցու երէցփոխ Ա. Տէր-Եղիազարեանցը հրաժարական է տալիս իր պաշտօնից։ Այսօր, յունվարի 25-ին, երէցփոխի նոր ընտրութիւն էր նշանակված։ Ժողովականների սակաւութեան պատճառով յետաձգվեց մինչ միւս կիրակի, փետրվարի 1-ը»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ հաղորդում են, որ քաղաքային վարչութիւնը որոշել է 500 ռուբլի յատկացնել Արփաչայ գետից ջուր հանելու ծրագիր կազմելու և հետազօտութիւններ անելու համար, որպէս զի կարելի լինի ջրել քաղաքի արօտատեղիները։

—

ԿՐԱՍՆՕՎՕԴՍԿԻՑ մեզ գրում են. «Կրասնավօդսկու խուլ կեանքը վերջին օրերս քիչ կենդանութիւն ստացաւ շնորհիւ դերասաններ Զարիֆեանների, որոնք այցելելով մեր քաղաքը, ամսիս 18-ին և 25-ին, բարեհաճ մասնակցութեամբ սիրողների, տուեցին երկու ներկայացում. առաջինը «Դամոկլեսեան սուր», երկրորդը «Անաղնիւ չեն ծնվում» դրաման և «Դօքտօր Թաթոս» վոդեվիլը։ Ներկայացումները երկուսն էլ խաղի կողմից շատ լաւ անցան և ժողովուրդը գոհ սրտով հեռացաւ թատրօնից։ Երկրորդ տարին է Զարիֆեան ամուսինները այցելում են մեր քաղաքը և իրանց գեղեցիկ և խելացի խաղով հայ ժողովրդին հեռաքրքրել են տալիս հայ բեմով»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Եղանակը մեզանում փոփոխական է, մերթ տաք, մերթ, սաստիկ բուքերով։ Երբ այստեղ ցրտեր է անում, լեռներում տաք է լինում, հալում է ձիւնը, աւելացնելով գետակների ջրերը։ Այդ բանը նկատվում է Ղուբայի գետակում և «Ալփան-չայում». այդ վերջինը ձմեռվայ ժամանակ չոր ու ցամաք է լինում, իսկ հիմա այն տեղ աւելի ջուր կայ, քան թէ գարնանը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ

(Նրա մահվան հարիւրամեակի առիթով)

I

Այսօր, յունվարի 30-ին, լրացաւ ուղիղ մահվան 100 տարին այն մարդու, որին երախտագէտ մարդկութիւնը փիլիսոփայութեան «անթագ թագաւոր» տիտղոսը տուեց։ Ծնված գերմանական փոքրիկ Քէօնիգսբերգ քաղաքում, մի խեղճ թամբագործ արհեստաւորի ընտանիքում՝ մեծ հանճարը կարող եղաւ իր ճակատով, իր ուղեղի ուժով հարթել իր ճանապարհը, գնալ դէպի բարձր հասարակական դասակարգերի սանդուղքով և վերջապէս հասաւ մի այնպիսի բարձունքի, որին նախանձում էին շատ իշխաններ ու դքսեր, կոմսեր և բարոններ, և նոյն իսկ թագակիր գլուխներ... Մի կոտոր մոխրագոյն ու սպիտակ նիւթ՝ դրված ոսկրէ ամուր ու գնդաձև դագաղի մէջ—ահա ուղեղը... Զնչին է նա իբր մեծութիւն և նիւթ, չնչին է նրա կատարած ներքին շարժումը—բայց անգնահատելի, մեծ ու սքանչելի է նրա կատարած պաշտօնը։

Կանտն իր ամբողջ կեանքն անց է կացրել իր մայրենի փոքրիկ քաղաքում, առանց նրանից երբ և է դուրս գալու, թէև նրա մէջ զօրեղ է եղել միշտ նոր երկիրներ տեսնելու, ճանապարհորդելու ցանկութիւնը։ Այնտեղ է ստացել նա իր սկզբնական կրթութիւնը, այնտեղ է միջնակարգ դպրոց մտել, այնտեղի համալսարանում աւարտել բարձրագոյն դասընթացը։

Նրա հայրը շօլանդական ծագումից էր՝—մի մարդ վերին աստիճանի աշխատող, խստակեաց, բարոյական և աւանդապահ. իսկ նրա մայրը յայտնի էր իբրև քնքոյշ ու ծայրայեղ բարի կին։ Ծնողների այդ գեղեցիկ յատկութիւնները ժառանգաբար անցան իրանց զաւակին, մանուկ Էմմանուէլին։

Նորագոյն մանկավարժական գիտութիւնները պնդում են, որ մարդու բնաւորութիւնը, նրա ամբողջ էութիւնը կազմակերպվում է երկու խոշոր գործօնների կամ ֆակտօրների ազդեցութեան տակ։ Դրանցից առաջինն է ժառանգականութիւնը, իսկ երկրորդն անհատի ստացած կրթութիւնը։ Ժառանգութիւն ստանում է մարդ ուղղակի իր ծնողներից կամ անուղղակի՝ իր նախնիքներից։

Մենք տեսանք Կանտի հօրից ու մօրից ժառանգած յատկութիւնները. այժմ անցնենք համառօտակի նրա միջավայրից ստացած ազդեցութիւններին։

Ամենից առաջ նրա հօր օրինակը սովորեցրեց նրան լինել համեստ, դիմացկուն, չարքաշ և, որ գլխաւորն է, աշխատող, անխոնջ, անսպառ, յարատև աշխատող։ Եթէ հանճարներն ունենում են իրանց գլխում ու ղզերի մէջ մի բնատուր, մի աստուածային կայծ, որ նրանց ամենախոշոր յատկութիւնն է, նրանք ունենում են միևնոյն ժամանակ և մի այլ խոշոր յատկութիւն՝ աշխատելու ընդունակութիւն։ Եթէ մենք վերցնենք Պլատոնների, Արիստոտէլների, Շէքսպիրներ, Լութերների, և մարդկութեան այլ բարերար հանճարների գործունէութիւնը և քննենք նրանց արած աշխատանքը, մենք կը զարհուրենք նրանց թափած եռանդի, էներգիայի չափից։ Այո, Կանտն իր հօրից ժառանգեց այն անգին յատկութիւնը, որ կոչվում է ջանասիրութիւն, աշխատելու կարողութիւն և ախորժակ։

(Կը շարունակվի)

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—

Ռուս-եապօնական պատերազմը, յետ մղելով բոլոր ընթացիկ քաղաքական հարցերը, ներկայումս իր վրա է բևեռել ամբողջ աշխարհի ուշադրութիւնը։ Դեռ պատերազմական գործողութիւնների սկզբումն ենք և այժմից իսկ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում թէ ով է և ինչ բան Ռուսաստանի հակառակորդը, ինչպէս նաև այն, թէ ինչ հանգամանքներից ծնվեց և այսօր իրողութիւն դարձաւ մեծ պայքարը, որ արիւնով պիտի վճռվի, ինչն է պայքարի առարկան, այն երկիրները, որոնք այսօր կուախնձոր են դարձել երկու պետութիւնների մէջ։

Մեր ընթերցողների այդ հետաքրքրութիւնը գոհացնելու համար, մենք մի շարք յօդուածների մէջ կը ծանօթացնենք նրանց Հեռաւոր Արևելքի պատմութեան և ժամանակակից դրութեան հետ, բաղելով հարկաւոր բոլոր տեղեկութիւնները պրոֆեսոր Մարէշալի «Պատմութիւն տասնիններորդ դարի» աշխատութիւնից, որի ռուսերէն թարգմանութիւնը նոր հրատարակվեց Պետերբուրգում։

Այդ տեսութիւնը բաժանում ենք մասերի. 1) Եապօնիա, նրա անցեալը և ներկան. 2) Ի՞նչ է Կորեան Հեռաւոր Արեւելքի հարցի մէջ. 3) Եապօնա-չինական պատերազմի հետեւանքները։

—

ԵԱՊՕՆԻԱ.

Եապօնիայի բացվելը եւրոպացիների համար։ *(1854—1858 թ.)* XVI դարում պօրտուգալացիներին թոյլատրվեց մտնել Եապօնիա. բայց 1637 թւին խստակութիւններ ծագեցին և քրիստոնեաներին կոտորեցին ու այնուհետև Եապօնիան փակվեց եւրոպացիների համար։ Բացառութիւն էր արվում միայն հոլանդացիների համար. բայց նրանց էլ չէր թոյլ տրվում Դեշիմա փոքրիկ կղզու, Նանգասակիի և Կիուսու պետութեան ամենահարաւային կղզու սահմաններից դուրս գալ։ Նախ քան Եապօնիայի մատչելի դառնալը եւրոպացիներին, այդ երկրի մասին գլխաւորապէս տեղեկութիւն ունէին գերմանացի Զիբօլդ (ծնած Վիւրցբուրգում 1796 թւին և մեռած 1866 թւին) բժշկի գրուածքներից։ Նա երկար ժամանակ ապրել էր Եաւա կղզում, մի քանի անգամ այցելել էր Եապօնիա և գրել է բազմաթիւ ուսումնասիրութիւններ այդ անծանօթ երկրի լեզուի, աշխարհագրութեան, պատմութեան և բուսական թագաւորութեան մասին։

1851 թւին Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները Եապօնիա ուղարկեցին հրամանատար Պէրրիին առևտրական դաշն կնքելու. ռամեայ բանակցութիւններից յետոյ Տայկունը (միապետը) բաց արեց ամերիկացիների համար Սիմօդու և Խակօդատի նաւահանգիստները (1851—1854 թ.)։ Նոյն ժամանակում Նագասակի և Խակօդատի նաւահանգիստները բացվեցին անգլիացիների համար։ 1851 թւին նոյն արտօնութիւնները ստացաւ և Հոլլանդիան։

1858 թւին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացեալ-Նահանգները աջողեցրին դաշնագիրներ կնքել, որոնցով ազատ ժուռք էր տրվում Կանագավու, Խիոգո կամ Կօբէ (Նիպոն կղզում), Խակօդատի (Իեզո կղզում) և Նանգասակի (Կիուսիու կղզում) նաւահանգիստները. օտարները իրաւունք ստացան բնակութիւն հաստատելու այդ գիւղերում, իսկ 1862 թւից՝ նաև Իէդդոյում և Օսակում. իրաւունք ստացան Եապօնիայում դեսպաններ և հիւպատոսներ ունենալու, քրիստոնէութիւնն ազատ պաշտել, օտար երկրների դրաշներն ազատ շրջանառութիւն ունենալ, ազատ առևտուր, միայն 5% արտահանութեան համար մաքս տալով։ Արգելվում էր միայն օպիումի մուտքը։

Եօկօհամայի հիմնարկութիւնը. (1858 թ)—1858 թւին եւրոպացիներն իրաւունք ստացան գրասենեակներ բաց անել Կանագավայի մօտերը, Եդդօ ծոցի ափերին։ Անգլիական վաճառականները հիմք դրին Եօկօհամա (ծովափ-նեայ) քաղաքին, որի մէջ 1891 թւին 127,987 բնակիչ կար, 1894-ին՝ 152,451, իսկ 1898-ին՝ 188,455 հոգի։ Նրանք իսկոյն սկսեցին բերել լցնել երկիր անգլիական ապրանքներ և արտահանել մետաքս, թէյ, հովհարներ և արուեստի ուրիշ արտադրութիւններ։ Բայց սկզբնական գաղութի բնակիչների վիճակը նախանձելի չէր։ Եապօնական ֆէօդալները (դայմիօներ) եւրոպացիներին անհաշտ թշնամի հանդիսացան. նրանց վասալները (սամուրա) կոտորում էին օտարներին նոյն իսկ նրանց բնակութեան համար թոյլատրված սահմանների մէջ։ Ամերիկական, անգլիական և ֆրանսիական նաւերն իրանց կարգին ստիպված էին յաճախ ամրակոծել դայմօսների ամբացրած ամրոցները։ Այն ինչ տայկունը (միապետը) արտայայտում էր լիակատար բարեհաճ տրամադրութիւն դէպի գաղթականները, և նրա պաշտօնեաները (եակունին) ամեն տեղ ուղեկցում և պաշտպանում էին օտարներին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Լօնդօնից հեռագրում են «Новое Время» լրագրին յունվարի 23-ից. «Երէկ ստացվեց մամնաւոր հեռագիր Պարիզի լաւատեղեակ աղբիւրից, որ նկարագրում է համաձայնութիւնը Ռուսաստանի և Եապօնիայի մէջ իբրև արդէն կայացած։ Սակայն վարդապոյն տրամադրութիւնը երեկոյեան դէմ տեղի տուեց արդէն մայրի, երբ ստացվեցին յետոյ մի քանի տեղեկութիւններ ռուսաց էսկադրայի դուրս գալու մասին Պօրտ-Արտուրից։ Եապոնասէրները ասում էին. «ուրեմն եապօնական նոր կրէյսերները ոչնչացան»։ Այսօր լուրերը Հեռաւոր Արևելքից պատերազմասիրական են։ Ֆրանսիական դիպլոմատիան ստատիկ հոգս է տանում խաղաղութեան մասին, մանաւանդ անելով ռուսաց պատասխանագրի հաշտ ոգու վրա։ Սակայն բոլոր դժուարութիւնները ծագում են Եապօնիայի և այն պատճառով, որ Անգլիան բաւականաչափ հաստատ խորհուրդներ չէ տալիս։ Անգլիական քաղաքագէտները մտանաւանդ են լինում այն բանի վրա, որ Տօկիօում տիրապետում է ամերիկական ազդեցութիւնը, որ, ըստ երևոյթին, սակաւ նպաստաւոր է խաղաղութեան։*

«Հասարակական կարծիքի երեք զանազան հոսանքներ է արտայայտվում այսօր մամուլի մէջ»։ «Times» ասում է, որ Անգլիան պատերազմի մէջ կը մտնի միայն այն դէպքում, եթէ մի ուրիշ պետութիւն Եապօնիայի դէմ գնայ, կամ Եապօնիան պարտութիւն կրէ, մի բան, որ, սակայն, անհաւանական է։ «Standard» պնդում է, որ անգլիական ժողովրդի անագին մեծամասնութիւնը անկեղծ կերպով խաղաղութիւն է ցանկանում։ «Daily News աւելի խորն է նայում և նկատողութեան է առնում ոչ թէ ներկայ բոպէն, այլ և քրիստոնէական քաղաքակրթութեան ամբողջ ապագան։ Լրագիրը ասում է, թէ սխալ է այն կարծիքը, իբր եապոնական և անգլիական իդէալները միակերպ են և իբր Եապօնիան մարտնչում է անգլո-սաքսօնական իդէալների համար։ Անգլիային սպասում է մեծ հիասթափութիւն... Եապօնական քաղաքականութեան նպատակն է—ազատել Ասիան եւրոպական ազդեցութիւնից։ Օգնելով Եապօնիային, Անգլիան ծառայում է համա-ասիականութեան, Ռուսաստանը պաշտպանում է Եւրոպայի և քրիստոնէութեան շահերը։ Եթէ Ռուսաստանը յաղթվի, Անգլիան ստատիկ կը փոշմանի, որ զրկեց Իրան և Եւրոպային ասիական առաջիկայացութեան կարևոր հակակշռից։ Լրագիրը այն կարծիքն է յայտնում, որ եթէ համա-ժնգոլութիւն չը կայ, բայց անկասկած գոյութիւն ունի համասիականութիւն, որ պէտք է ստիպէ քրիստոնեայ Եւրոպայի ազգերին միանալ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 28-ին հրատարակվեց Բարձրագոյն Մանիֆէստը։ «Правительственный Вѣстникъ» լրագիրը ձեռքից ձեռք է խլվում։ Առաւօտից հնչում է զանգահարութեան ձայնը, որ ժողովրդին տաճար է հրաւիրում աղօթելու Թագաւորի համար և յաղթութիւն պարգևելու։ Առանձնապէս ժողովրդի մեծ բազմութիւն է լինում Կազանսկի և Իսակիևսկի տաճարներում։ Յունվարի 27-ին Մոսկվա ուղևորվեց Մոսկվայի օբէր-պօլիցմէյստեր գէներալ Տրէպով։

ՏՕԿԻՕ։ («Ռէյտ. գործ.»)։ Ենթադրում են, որ կայսերական գլխաւոր բանակատեղը պատերազմի ժամանակ փոխադրված է Կիոտո։

Կ. ՊՕԼԻՍ։ Ժանդարմերիայի վերակազմութեան համար կազմված յանձնաժողովի այսօրվայ նիստում կատարեալ համաձայնութիւն

կայացաւ։ Բանակցութիւնների հետևանքները գաղտնի կը պահվեն մինչև նրանց աւարտումը։ Բ. Դուռը հաղորդեց պայմանագրվող պետութիւնների դեսպաններին, որ Ֆիլիպոպոլում ապատամբները ցոյց տարքեցին. կատարված են բռնութիւններ մահմեդականների վրա։

ԿՐՕՆՇՏԱԴՏ։ Յունվարի 28-ին ծովային վարչութեան տեխնիկական դպրոցի 34 աշակերտներին առանց քննութեան տրվեց ինժենէր-մեխանիկների կրտսեր օգնականների կոչում և յունվարի 30-ին ուղևորվում են Պօրտ-Արտուր։ Եկեղեցիներում, ծովային մասնէժում և քաղաքային դումայում մաղթանքներ կատարվեցին յաղթութիւն պարգևելու մասին։

ԿԻԵՎ։ Մարբինսկայա համայնքը արտակարգ կազմակերպում է բժիշկների, գթութեան քոյրերի և սանիտարների խումբը Հեռաւոր Արևելք ուղարկելու համար, կազմելով հիւանդանոց 200 մահճակալներից։

ՎՕՐՈՆԷԺ։ Բոլորը առանձին հետաքրքրութեամբ հետևում են Հեռաւոր Արևելքում տեղի ունեցած անցքերի տեղեկութիւններին։ Քաղաքային թատրոնում, հասարակութեան պահանջով, երբակի կատարվեց «Տէր, պահեա զԿայսր»-ը։

ՆՈՎԱՅԱ-ԲՈԽԱՐԱ։ Քաղաքական գործակալութեան եկեղեցում կատարված մաղթանքին, պատերազմ յայտարարելու առիթով, հաւաքվեց ամբողջ ռուս ազգաբնակութիւնը։ Կարմիր խաչի ընկերութեան նուիրված է 4000 բուբլի, որ հաւաքել է տիկին Լիւշ չը-քաւորների օգտին յունվարի 9-ին կազմած բազարում։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Յունվարի 28-ին, առաւօտեան 9 ժամին, արտակարգ գնացքով ժամանեց հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը և ընդունեց նահանգապետին ու զարայկալեան և շրջաբայկալեան երկաթուղիների ներկայացուցիչներին։ Երեք ժամից յետոյ մինիստրը ճանապարհ ընկաւ Մանջուրիա։

ՏԱԳԱՆՐՕԳ։ Յունվարի 28-ին Տագանրօգի զինուորական ժողովարանում, Բարձրագոյն մանիֆէստով հեռագիրը ստանալուց յետոյ, 2-դ պահեստի թնդանօթաձգային բրիգադայի ժողովված օֆիցէրները, լսելով մանիֆէստի խօսքերը, երբակի երգեցին ժողովրդական հիմնը և պատրաստականութիւն են յայտնում իրանց կուրծքը դէմ դնել Թագաւորի և հայրենիքի համար։ Հայրենասիրական չեղած ոգևորութիւն է տիրում։

ՐԷՎԷԼ։ Ժողովրդի ահագին բազմութեան ներկայութեամբ կարդացվեց մանիֆէստը, որից յետոյ մաղթանք կատարվեց յաղթութիւն պարգևելու համար։

ՄՕՍԿՎԱ։ Գթութեան քոյրերի Ալէքսանդրօվսկայա համայնքը արհեստանոցներ բացեց սպիտակեղէններ պատրաստելու հիւանդների և վիրաւորվածների համար։ Համայնքը պատրաստում է սանիտարական խումբ, Նոյնպիսի խումբ պատրաստում է և Իվէրսկայա համայնքը։—Դուման, բացի մէկ միլիոն նուէրից, կազմակերպում է օգնութիւն պատերազմում գտնվող մոսկվացիների չքաւորագոյն ընտանիքների համար։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ, յունվարի 28-ին։ («Ռէյտ. գործ.»)։ Գիներալ Կրաստալինսկիից վաղը Լեգունից ուղևորվում է դէպի Եալու գետը՝ գլուխ կանգնած 24 թնդանօթներից և երեք հեռակ գնդերից բաղկացած երրորդ թնդանօթաձգային բրիգադայի։ 3-րդ, 4-րդ և 5-րդ բրիգադաները գրաւեցին խրամատները երկաթուղային գծի երկարութեամբ Խայշէնդից 40 մղոն հեռաւորութեամբ։ 5-դ բրիգադայի երեք բատարէաները գտնվում են Կինտշաում։ Ընդամենը Մանջուրիայում գտեղված են 36 արևելեան-սիբիրեան գնդեր։ Զորս գնդեր յունվարի 22-ից գնում են դէպի Վլադիվոստոկ։

ՉԻՖՈՒ, յունվարի 27-ին։ («Ռէյտ. գործ.»)։ Պօրտ-Արտուրի մօտ տեղի ունեցած պատերազմի մասին «Ռէյտերի գործակալութիւնը» հաղորդում է է, որ եապոնական փոխծովապետը առաջնորդում էր չորս զրահակիրներից բաղկացած նաւատորմի. նրանք կիսաշրջան կազմելով կանգնեցին նաւակայարանից դուրս և իրանց դէմ առաջացրին ռուսաց թնդանօթների կրակը, իսկ յետոյ միացան եապոնական գլխաւոր նաւատորմի հետ։ Ապա եապոնական բոլոր նաւերը յարձակում գործեցին ռուսաց զրահակիրների վրա։ Եապոնական գլխաւոր նաւատորմը բաղկացած էր երկու դիվիզայից. առաջինը բաղկացած էր «Միկասդ» ֆլագմանեան նաւից, 4 «լինէյնի» անուանված նաւերից և երկու նաւից. իսկ երկրորդ դիվիզիան, ծովապետ Կամիմուրայի հրամանատարութեամբ, բաղկացած էր 4 զրահակիր նաւերից։

ՊԱՐԻԶ։ «Temps» լրագիրն ասում է. «Ամբողջ աշխարհին յայտնի է, որ Ֆրանսիան միաբերան ցանկանում է աջողութիւն իր դաշնակցին։ Գոյութիւն ունեցող դաշնագիրները նակցին։ Գոյութիւն ունեցող դաշնագիրները չեն պարտաւորեցնում Ֆրանսիային մասնակցելու ներկայ պատերազմին, այնու ամենայնիւ ցելու ներկայ պատերազմին, այնու ամենայնիւ Ֆրանսիան Ռուսաստանի դաշնակիցն է, և այն ժամանակ, երբ ռուսները կը պատերազմեն եապոնացիների հետ, մեր լուռ անշարժութիւնը կը թուացնէ իւրաքանչիւր փորձ այս կամ այն տեղում կուից օգուտ քաղելու ի վնաս մեր դաշնակցի։ Միմիայն մեր ներկայութեամբ մենք կը փակենք ճանապարհը նրանց բոլորի առաջ, որոնք կը ցանկանան ընդարձակել այժմեան ընդհարման շրջանակները։ Երբ կը վերջանան պատերազմական գործողութիւնները, որի հետևանքը, չը նայելով եապոնական ցնորքներին, կասկածից դուրս է, Ֆրանսիան, քանդելով մրցողների յոյսերը, կը հնձէ իր տուած խօսքի հաւատարմութեան պտուղները։»

ՀՌՕՄ։ Բանակցութիւններ են վարվում բարձրաստիճան օֆիցէրներից մէկին Հեռաւոր Արևելք ուղարկելու մասին պատերազմական գործողութիւններին ներկայ լինելու համար։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ («Ռէյտ. Գործ.»)։ Կարինէտը վճռեց խիստ չեզոքութիւն պահպանել։ Գէյի յայտագրի վերաբերմամբ կայացաւ արդէն մի քանի հաղորդագրութիւնների փոխանակութիւն, որը արդարացնում է պետութիւնների կողմից նպաստաւոր պատասխաններ ստանալու յոյսը։

ՏԵԱՆՑԶԻՆ, յունվարի 27-ին։ («Ռէյտերի Գործ.»)։Նանխայգուանում ժամ առ ժամ սպասվում է Ֆրանսիական նաւի գալուստը Տօնկինից Ֆրանսիական զօրքերի բատալիօնով, որը ուղարկված է գրաւելու համար այն մարտկոցները, որ թողել են ռուսները։ Ասում են, որ այսօր վաղ առաւօտեան եռագոյն դրօշակներ բարձրացրվեցին այն մարտկոցների վրա, որոնք պահպանվում էին միմիայն պահապան զինուորներով։ Նանխայգուանում գտնվող անգլիական օֆիցէրը բողոքեց Ֆրանսիական դրաւման դէմ։ Գիներալ Վենտրիս, անգլիական զօրքերի հրամանատարը հիւսիսային Չինաստանում, այսօր առաւօտ ուղևորվեց Նանխայգուան։

ԼՕՆԴՕՆ։ («Ռէյտ. գործ.»)։ Յունվարի 26-ին Զէմուլպօյում ափ իջան մի քանի հազար եապոնական զօրքեր, չը նայելով ռուսաց երկու պատերազմական նաւերի ներկայութեան։

ՇԱՆԳՀԱՅ, յունվարի 27-ին։ («Ռէյտ.գործ.»)։ Լուրերի համեմատ, ռուսական «Մօնգոլիա» պօստային շոգենաւը, որ հեռացել է Կիրակի այստեղից, գրաւվել է եապօնացիներից Շանդունեան ծովափի բարձրութեան վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է հետևեալ Անուանական Բարձրագոյն ուկազը Կառավարչական Սենատին. «Փոխարքայութեան զօրքերը, նոյնպէս և Սիբիրեան նաւատորմի կազմը, հարկաւորութեան դէպքում շուտով պատերազմական դրութեան մէջ դնելու համար, Մենք անհրաժեշտ համարեցինք Մեր փոխարքային Հեռաւոր Արևելքում տալ իրաւունք. 1) փոխարքայութեան շրջանում իսկական ծառայութեան կոչել զօրքի և նաւատորմի պահեստի օֆիցէրներին և զինուորներին, որոնք այնտեղ ապրում են, այդ շրջանում գոյութիւն ունեցող մասնաւոր մոբիլիզացիայի վերաբերեալ կարգով և 2) կարգադրել ազգաբնակութիւնից ձեռք բերել փոխարքայութեան զինուորներին հարկաւոր քանակութեամբ ձիեր, համաձայն այս մասին եղած առանձին խորհրդածութեան։ Այս մասին մերձաւորագոյն ցուցմունքներ Մենք տուել ենք զինուորական մինիստրին և ծովային մինիստրութեան կառավարչին։ Կառավարչական Սենատը սրա գործադրութեան վերաբերմամբ պատշաճաւոր կարգադրութիւնը պէտք է անէ։ Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է. «ՆԻԿՕԼԱՅ»։

Փոխարքայի հեռագիրը զինուորական մինիստրին յունվարի 26-ից. «Ի կատարումն Բարձրագոյն հրամանի, Պօրտ-Արտուր և Վլադիվոստոկ բերդերը և այն տեղերը, որոնք գտնվում են չինական արևելեան երկաթուղու տրամադրութեան տակ, յունվարի 28-ից յայտարարվում են պատերազմական դրութեան մէջ։ Կարգադրութիւն է արված զարայկալեան զօրքի չորս արտօնեալ գնդերի և երկու բատալիօնների փոքձնական մոբիլիզացիա կատարել։ Գիներալ-ադիւտանտ Ալէքսէեվ»։—Գիներալ-ադիւտանտ Ալէքսէեվի հեռագրի պատճէնը Պօրտ-Արտուրից յունվարի 27-ից. «Ներկայ թւին, Բարձրագոյն ուկազի հիման վրա յունվարի 24-ից, որ հաղորդվեց գլխաւոր շտաբի հրամանատարի հեռագրով յունվարի 25-ից, ես յայտարարեցի փոխարքայութեան, նոյնպէս և Կվանտունեան և Պրիմօրսկի շրջանի և Սախալին կղզու մոբիլիզացիա։ Մոբիլիզացիայի առաջին օրն է յունվարի 28-ը։ Գիներալ ադիւտանտ Ալէքսէեվ»։

ՐԻՎԷԼ։ Կարգադրութիւն է ստացված անյապաղ Խարբին ուղարկել գործարանում ունեցած բոլոր շարժիչները և չինական երկաթուղու պատրաստ վագոնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա այցելեցին ծովային կադէտների կորպուսը, ուր դիմաւորվեցին Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչի, ծովային մինիստրութեան կառավարչի, կորպուսի դիրեկտորի և այլ իշխանաւոր անձանց կողմից։ Նոցա Մեծութիւններն անցան մեծ սեղանատան դահլիճը, ուր կարգով կանգնեցին գարդէրմարինները և կադէտները։ Թագաւոր Կայսրը, ծովային համազգեստով, բարևեց կադէտներին։ Նրանց առջևից անցնելով, Թագաւոր Կայսրը հրամայեց դուրս կանչել գարդէրմարիններին և դիմեց նրանց հետևեալ խօսքերով. «Ձեզ յայտնի է, պարոներ, որ Մեզ պատերազմ է յայտարարված։ Ցանկանում բնեմին մուք գիշերով համարձակվեց յարձակվել Մեր ամուրեան —Մեր նաւատորմի վրա առանց որ եւ է պատճառի մեր կողմից։ Ներկայումս հայրենիքը կարիք ունի իր բոլոր նաւատորմի եւ բոլոր զօրքի զինուորական ոյժերի, եւ ես Իշխս դիտմամբ եկայ այստեղ տեսնելու ձեզ եւ ասելու ձեզ, որ ես միչմանի ասիենաւ եմ տալիս ձեզ՝ մեր նաւատորմը լրացնելու համար։ Այդ ասիենանը տալով այժմ, 3½ ամիս աւելի վաղ իր ժամանակից եւ առանց բնեմութեան, ես հաւատացած եմ, որ դուք ձեր ամբողջ ջանքը եւ եռանդը գործ կը դնեք ձեր գիտութիւնները լրացնելու համար եւ կը ծառայեք, որպես ծառայում էին ձեր նախահայրերը, պապերը եւ հայրերը յանձին Զիչագով, Լազարեվ, Նախիմով, Կորնիլով եւ Իսօմին ծովապետների յոգուս, եւ ի փառս մեր թանգագին հայրենիքի։ Ես հաւատացած եմ, որ դուք ձեր բոլոր ոյժերը կը նուիրեք մեր նաւատորմին, որը ծածկված է անդրեեվեան խաչ ունեցող դրօշակով։ Ուրա»։ Միապետի խօսքերի պատասխան եղան զօրեղ «ուրան» և օրհներգի հնչիւնները։ Ապա Նոցա Մեծութիւնները գնացին հիւանդանոց, ուր ողորմած խօսակցութեան արժանացրին հիւանդ կադէտներին։ Ապա Նոցա Մեծութիւնները հեռացան եւ կադէտները հիացմունքով ճանապարհ զցեցին Նոցա Մեծութիւններին մինչև Ձմեռային պալատը։

ՎՕԼՕԳԴԱ։ Վօլօգդայի դումայի ձայնաւորները վճռեցին արկանել առ ոտս Նորին Մեծութեան իրանց սիրոյ և հաւատարիմ հպատակութեան զգացմունքները եւ հաւաստիացումն, որ Վօլօգդայի բնակիչները պատրաստ են ամեն զոհաբերութիւն անել Գահի և հայրենիքի սեղանի առաջ։

ԲՐԻՍՍԷԼ։ Յունվարի 28-ին։ Այն գնացքը, որ երէկ երեկոյեան Պարիզ ուղևորվեց, ներս պրծան դրամական ծարներ գտնվող բաժանմունքը վեց չարագործներ։ Կապելով ծառայողներին և յափշտակելով դրամական բոլոր ծրարները, նրանք դուրս թռան վագոնից։

ՊԱՐԻԶ։ Լրագիրները տպեցին հետևեալ հեռագիրները Պօրտ-Արտուրից յունվարի 27-ից. «Եապօնական 15 զրահակիրներից բաղկացած նաւատորմը առաւօտվանից ռմբակոծում է Պօրտ-Արտուրը։ Մարակոցները պատասխանում են։ Ամբողջ ռուսաց նաւատորմը դուրս եկաւ։ Սկսվեց կռիւ։ Եապօնացիների ծրագիրը, այն է յանկարծակի յարձակում գործել հակառակ միջազգային իրաւունքի, իրագործվում է։ Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այն բանի վրա, որ Գայաշի երեք օր առաջ նախագուշակեց ծովային պատերազմ. հէնց դա էլ տեղի ունեցաւ առանց նախապէս պատերազմ յայտարարելու։»

ՄՕՍԿՎԱ։ Այսօր Ուսպէնսկի տաճարում բարձր իշխանութիւնների ներկայութեամբ կարդացվեց հանդիսաւոր մաղթանք ծնկաչոքութեամբ։ Կրէմլը լցված էր ժողովրդի ահագին բազմութեամբ։—Քաղաքային դումայում կատարվեց մանիֆէստ և մաղթանք կատարվեց։—Առևտրական բօրսային ընկերութիւնը որոշեց հանգանակութիւն սկսել մինչև մէկ միլիոն բուբլի և ունեցած 80,000 բուբլու հետ միասին գործադրել ի նպաստ զինուորականների ընտանիքների և այլանդակած զինուորականների։ Որսորդական կլուբը հիւանդանոցի համար նուիրեց 5000 բուբլի. մի անյայտից ստացվեց 25,000 բուբլի։

ԲԼԱԳՕՎԷՇՉԷՆՍԿ։ Զօրքերը զէնքի կանչելու Բարձրագոյն հրամանի վերաբերեալ տեղեկութիւնը ստացվեց Բլագօվէշչէնսկում յունվարի 27-ին. երեկոյեան 8 ժամին մօտ զինակոչին վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները աւարտված էին։ Կենսական մթերքների գները սաստիկ բարձրանում են։ Եապօնացիների մեծ մասը (163 մարդ) Ֆացին քաղաքում։ Զինուորական նահանգապետը յայտարարեց վճիռ, հրաւիրելով բոլորին և իւրաքանչիւրին անկարգութիւնների առաջն առնել և չը թոյլ տալ, որ սուտ լուրեր տարածվեն և բռնութիւններ գործ դնվեն օտարահպատակների, եապօնացիների, կորէյացիների և չինացիների վերաբերմամբ։ Տրամադրութիւնը քաղաքում հանգիստ է։

29 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դուման ժամը 8-ին մաղթանք կատարեց յաղթութիւն պարգևելու մասին, իսկ յետոյ՝ միաձայն վճռեց տալ 1½ միլիոն բուբլի պատերազմում վնասվածների համար։

ԿԻԵՎ։ Բարձրագոյն մանիֆէստը ստանալուց յետոյ, ժողովրդեան մեծ խմբեր հայրենասիրական ցոյցեր արեցին, որ շարունակվում էին ամբողջ երեկոն մինչև խորը գիշերը։ «Коль славенъ» երգի երգեցողութեանը յաջորդում էր որոտալից «ուրան»։ Դումայի առաջ, ժողովրդի ցանկութեամբ, երևում է պատշգամբի վրա Թագաւոր Կայսրի պատկերը, որը ողջունվում է անխնայագրելի հիացմունքով։ Օֆիցէրներին ձեռքերի վրա են բարձրացնում և մանածում. հանդիսաւոր ընթացքի առաջ տանում են ազգային դրօշակներ։ Տեղի ունեցաւ ջերմ ցոյց ֆրանսիական հիւպատոսարանի առաջ, ուր ռուսաց օրհներգին յաջորդում է ֆրանսիականը։ Կարգապահութիւնը կատարեալ է։

ՄՕՍԿՎԱ։ Կարմիր Խաչի Մոսկվայի բաժանմունքը որոշեց պատրաստել հիւանդանոցային պարագաներ 4000 զինուորների համար և հանգանակութիւն բանալ։

ԿՈՒՐԳԱՆ։ Յունվարի 29-ին յայտարարված է մոբիլիզացիա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրամանի մէջ յունվարի 28-ից յայտարարված է 3-րդ սիբիրեան զօրաբաժնի կազմակերպութեան մասին Բարձրագոյն հրամանի հիման վրա յունվարի 24-ից։—Ներքին գործերի մինիստրը որոշեց արգելել «Петербурская Газета» լրագրի հատով վաճառումը։Արդարադատութեան մինիստրը ուղևորվում է արտասահման մասնակցելու համար Հաագայում նրա նախագահութեան տակ եղող միջազգային միջնորդ դատարանի նիստերին և յանձնեց մինիստրութեան կառավարչութիւնը իր օգնական սենատոր Մանուխինին։—Բարձրագոյն բարեհաճութեամբ Կայսերական կառավարութեան և ֆրանսիական հանրապետութեան կառավարութեան միջև կայացած համաձայնութեան հիման վրա, ռուսահպատակների շահերի պաշտպանութիւնը և Կայսերական միսսիաների և հիւպատոսութիւնների շինութիւնների պահպանութիւնը Եապօնիայում պատերազմական գործողութիւնների ժամանակ յանձնված է Ֆրանսիայի դիպլոմատիական և հիւպատոսական ներկայացուցիչներին։ Եապօնահպատակների շահերի պաշտպանութիւնը Ռուսաստանում, նոյնպէս և եապօնական միսսիաների և հիւպատոսարանների շինութիւնների պաշտպանութիւնը եապօնական կառավարութիւնը յանձնում է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների դեսպանին։—Յունվարի 28-ին եապօնական դեսպանութիւնը իր ամբողջ կազմով ճանապարհ ընկաւ Պետերբուրգից։

ՊՕՐՏ-ՍԱԻԴ։ Ռուսական երկու ականանաւեր և «Մոլէնսկ» ու «Բօսսիա» նաւերը հասան այստեղ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Բուզվէլտը վճռեց չեզոք յայտարարել Միացեալ-Նահանգները պատերազմի ժամանակ Հեռու Արևելքում։ Համապատասխան շրջաբերական կը հրատարակվի յունվարի 28-ին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՌՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից:

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) և միզասեռ հիւանդ.

ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուչ. շորեք. ուրբաթ:

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. նկրքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.

Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (հիկտարաուժութիւն), ներքին և վեներական հ.

ԿԻՆ-ԲԺԻԶԿ ՁԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:

Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. շքաւորները ձրի: Համախորհրդի (Լկոնսիլիումի և օպերացիայի համար առանձին:

Օ. Ա. ԱՌՎԱՆԻՑԱՆԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԵՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԵԱԳ

աճեցրի իմ արտասովոր երկար մազերս (185 սանտիմէտր երկար.), որոնք յիշեցնում են Լօրելէյի մազերը. —չնորհիւ իմ հնարած պօմադայի 14-ամեայ գործածութեան: Այս պօմադան ճանաչված է իբրև լաւ միջոց մազերի թափվելու դէմ. որ և մի և նոյն ժամանակ նպաստում է մազիր ուռնելուն և նրա արմատները ամրանալուն. չնորհիւ այս պ մազայի տղամարդկանց մօրուքը սատանում է երկարելուն, նոյնպէս ընական փայլ գլխի մազերի և մօրուքի վրա (մինչև անգամ պօմադայի կարճ ժամանակվայ գործածելուց յետոյ). միաժամանակ այս պօմադան պահպանում է մազերը վաղաժամ սպիտակելուց մինչև անգամ ծերութեան հասակում:

Սրուակի գինը 3, 5 և 8 բուբլի:

Հասանելիք գումարը ստանալուց յետոյ ամեն օր պօստով ուղարկվում են աշխարհի ամեն կողմերը հէնց ֆաբրիկայից, ուր որ ուղարկվելու են պատուէրները:

ANNA CSILLAG

WIEN 1. Graben 14.

Գլխաւոր պահեստը Թիֆլիսում, Բազում և Բաթումում դեղավաճառային Կոլկասեան Առևտրական ընկերութեան գլխաւոր պահեստներում.

8—26

Լոյս տեսաւ Պ. Մանուեգացցայի

ՍԻՐՈՅ ՄԵՂՔԵՐԸ և ՆՐԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ

Հոգեբանական հետազօտութիւն

Գինը 10 կօպէկ:

Գումարով գնողներին և գրավաճառներին 20% զեղչ: Դիմել թարգմանչին՝ Александрополь, свящ. Ерванду Налбандянъ. Թիֆլիս՝ Կենտրօնական և «Գուտենբերգ» գրավաճառանոցները: 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի:

44—100

ԱՐԱՔՍԵԱՆԻ ՀԱՒԱՔԱԲԱՐԻ ՆՈՐ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, յունվարի 31-ին, հայ դերասանական խումբը, ղեկավարութեամբ պ. Ա. Արաքսեանի

Մասնակցութեամբ տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ, պ.պ. Արաքսեանի, Աղայեանի, Վրոյրի և Ալիխանեանի

կը ներկայացնէ

ԱՆՄԵՂ ՄԵՂԱՒՈՐՆԵՐ

Կոմեդիա. 4 արար., հեղ. Աստրովսկու, թարգմ. Արովմեանի:

Մասնակցում են տ.տ. Սիրանոյշ, Զարէլ, Արաքսեան, օր.օր. Բէգիջանեան, Հայկանոյշ, պ.պ. Արաքսեան, Ալիխանեան, Աղայեան, Վրոյր և ուրիշներ:

Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան:

Տօմսակները վաճառվում են կասայում:

1—2 Վարչութիւն Պ. Ա. Արաքսեանի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տէր Սիմէօն աւագ քահանայ Զմշկեանցի յօբելեանի մասնակցութիւնը սկսած յունվարի 5-ից մինչև ապրիլի 4-ը ընդունվում են Տէր Սիմէօնի տանը: 1—2

ՀՐԱՒԷՐ

Ըստ յանձնարարութեան վիճակային կօնսիստօրիայի, փետրվարի 1-ին, կիրակի, ժամը 12-ին, ս. պատարագից յետոյ նշանակված է Թիֆլիսի Մողնու ս. Գէորգ եկեղեցու երէցփոխի ՎԵՐՁՆԱԿԱՆ ընտրութիւն: Ուստի և խնդրում եմ յիշեալ եկեղեցու յարգելի ծխականներին ներկայ լինելու ընտրութեանը:

Անդամ կօնսիստօրիայի՝

1—2 Գ. ք. Շերժաղանեանց

Լոյս տեսաւ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

1) Առաջին գրքոյկը

ԱՆԴԷՐՍԸՆԻ ՀԷՔԻԱԹՆԵՐԸ

Պատկերազարդ, հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ, թարգմ. Տ. Զաւէնի:

Գինն է 50 կոպէկ:

2) Երկրորդ գրքոյկը

ԱՐԲԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Գինն է 20 կոպէկ:

Դիմել՝ Թիֆլիսում — Հրատարակչին և «Գուտենբերգ»,ու «Կենտրօնական» գրավաճառանոցներին. Բագուում—«Պրոմէթէոս», «Սօսրուդնիկ» և «Ղազանչեան» գրավաճառանոցներին: Երևան — «Արարատ» գրավաճառանոցին: 1—3

Տպագրութեան համար արդէն պատրաստած լինելով մի լիակատար հայերէն ԵՐԳԱՐԱՆ, բայց ցանկանալով առաւել կատարեալ դարձնելու, խնամքաբար խնդրում եմ այն բոլոր անձանց, որոնք ձեռնհաս են և կամ ժողված ունեն երգեր, պարերգեր, նամանաւանդ ժողովրդական բանաստեղծութիւններ և երգեր, բարեհաճեն ուղարկել ինձ հետեւեալ հասցէով. Баку, Араму Аракелянцу. Въ книжный магазинъ С. Д. Арутюнова. *(ե. հ. կ.)* 1—6

ԳՐԻԳՕՐԻՅ ՄԱՏՎԷԵՎԻՉ

Ի Օ Խ Վ Է Դ

Ընդունելութիւն ատամների և բերանի խոռոչի հիւանդութիւնների, ատամ հանելու, բժշկելու, պլոմբ անելու, մաքրելու և արհեստական ատամներ շինելու:

Հասցէն՝ Михайловская ул., № 108, противъ Кирки: Ընդունելութիւնը առաւօտեան 10-ից մինչև երեկոյեան ժամի 7-ը: 16—30

ՎԻԵՆՆԱ. ԲԺ. Գ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ

Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտ-պրոֆէսօրների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար:

Հասցէն Wien, Spiegelgasse, 3, IV stock. 4—50

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետեւեալ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Աշակերտաց համար

1. Դասատետր կրօնի	ա. տարի	.	— 25
2. » »	բ. »	.	— 20
3. » »	գ. »	.	— 30
4. Հին-ուխտ	դ. »	.	— 35
5. Նոր-ուխտ	ե. »	.	— 40
6. Գործք առաքելոց	զ. »	.	— 40

Ուսուցչաց համար

7. Ուղեցոյց կրօնի—հին-ուխտի (սպառ.)	—	—
8. » » —նոր-ուխտի	. 2	—50
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ.	1	—50
10. » » » Ե. »	—	50

Ինձ դիմողները ստանում են 1) 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ:

Կարելի է դիմել—1) Ինձ (коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ «Гуттенбергъ».

44—100 Սահակ քահ. Սահակեանց

ԹԷՅԻ ԱՌԵՒՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. ՎԻՍՕՑԿԻ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Մատակարարողներ տանն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ և Նորին Մեծութեան Պարսից Շահի

Հիմնական դրամագլուխ 6,000,000 բուբլի: Տարեկան շրջանառութիւն 20000000 բուբլուց աւելի:

Շնորհիւ մեր թէյերի բարձր յատկութեան, առաւելապէս իրանց ուժեղ արօմատով, լաւ համով և թունդ գոյնով, մեր ֆիրման Մեր խանութներում, որոնք գտնվում են Մօսկվայում և ԵՒՐՕՊԱՅՈՒՄ բռնեց առաջնակարգ տեղերից մէկը մեր ծախած թէյի քանակութեամբ: Օդեսայում՝ մեր սեփական շինութիւններում, աշխատում է 1500 մարդուց աւելի:

Մեր ֆիրմայի թէյը գտնվում է Ռուսաց Պեստրեան բոլոր մագազինների:

Մեր թէյն առնելու ժամանակ խնդրում ենք պ.պ. գնողների ուշադրութիւն դարձնել մեր առևտրական մարկայի՝ նաւի՝ ճշդութեան վրա, որ հաստատված է պետութիւնից, և պահանջել Վիսօցկու թէյը՝ նաւով:

Վ. ՎԻՍՕՑԿԻ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրասենեակը գտնվում է Մօսկվայում:

Բաժանմունքները.—Օդեսայում, Վարշավայում, Բօստովում Դօնի վրա, Եկատերինբուրգում, Խարկովում, Թիֆլիսում, Բիգայում, Վիլնոյում, Սիմֆէրօպոլում, Նիժէգորոդեան և Իրբիտսկի տօնավաճառներում:

Անդրկովկասի և Անդրկասպեան երկրների համար բաժանմունքը Թիֆլիսում գտնվում է Մէյդանում, Թէլէֆոն № 32:

Ընկերութեան հասցէն Մօսկվայում և բաժանմունքներում.—Թէյի առևտրի ընկերութիւն Վ. ՎԻՍՕՑԿԻ և Կ°.

Հեռագրների համար.—«ԿԱՐԱԲԼԻԿ»:

Թէյ ուղարկվում է Պարսկաստան տրանզիտով և այդ ժամանակ յետ է ստացվում մաքսը:

1—20

Նոր լոյս են տեսել

Ք. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

մշակած հայկական երգերը, որ ներդաշնակել է պիանօի համար

Լէօնիդ Կնիցա

Ծախվում են ամեն երաժշտական խանութներում, «Գուտենբերգի» գրավաճառանոցում, Թիֆլիսում (այնտեղ է և պահեստը) և հրատարակչի՝ Պօղ. Կարա-Մուրզայի մօտ (Тифлисъ. ул. Панасевича № 8).

Առաջի տետրի (10 երգ) գինն է 1 բուբլի:

(չ. շ.) 5—10

„Գուտենբերգ"

գրախանութում վաճառվում է

„ԴԱՒԻԹ ԲԷԿ"

Բաֆֆիի.

Երեք հատորը միասին արժէ. . 3 բ. 50 կ.

Շեղ կաշի կազմով . . . . . 4 » — »

Պօստի ծախք պէտք է ուղարկել. — — 50 »

Դիմել.—Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустянъ. 3—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ գրավաճառանոցում վաճառվում են հետեւեալ նոր հրատարակութիւնները՝

Բաբեան բժշկպ., «Տնային բժշկարան», պրակ բ. 448 մեծադիր էջ, Թիֆլ. 1904 թ., գ. 1 ռ. 60 կ., ուր ծախվում է նոյն բժշկարանի պրակ ա. 182 մեծադիր էջ, պատկերազարդ, Թիֆլ. 1903 թ.. գ. 1 բ.:

Պապասանեան Ս., Պատմութիւն հայոց, սկզբից մինչև մեր օրերը, գ. տիպ, Թիֆլ. 1903 թ. գ. 1 ռ. 50 կ.:

Ս. Էջմիածին, 305—1903, պատկերազարդ նկարագրութիւն, Վենետիկ, 1903 թ. գ. 1 բ.:

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. *(չ. 1 ռ.)* 4—10

Լոյս տեսաւ Ա. Վրոյրի

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԸ

303—1903

Լուսանկարչական ստէրէօսկոպ պատկերների ժողովածուի Ա. մասը. բաղկացած Էջմիածնի և շրջակայ վանօրէից, ճեմարանի, Արարատ լերան և այլ տեսարանների 25 պատկերներից. գինը 6 բուբլի, ճանապարհածախսը գնողի վրա է:

—

Ա Ն Ի Ռ Ա Գ Ա Ր Ի

Ստէրէօսկոպի պատկերների ժողովածուի Ա. մասը, 50 պատկերներից բաղկացած, գինը էժանացրած է. 10 բ.: Օրերումս լոյս կը տեսնի նոյն ժողովածուի Բ. մասը 50 պատկերներից բաղկացած. գինը 10 բ.: Դիմել Թիֆլիս, «Գուտենբերգ» գրավաճառանոցը: Իսկ Բագու Եղբ. Տէր-Յովհաննիսեանցների խանութը: 3—3

ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ

մէջակ կրթութիւն ստացած փնտռում են գործեր. յանձն են առնում ամեն տեսակ գործեր կատարելու, նաև ուրիշ քաղաքներ գնալու: Ծանօթ են գործակատարի պաշտօնավարութեան:

5 уч. Ѳомипой пер. д. № 6, кв. № 2. 2—5

Լոյս տեսաւ և վաճառվում է

ՐԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿ

Պատմական վէպը

I—II և III գիրք. վերջաբանով.

Գինն է փառակազմ 5 բ., անկազմ 3 բ. 50 կ. Մեզ մօտ վաճառվում է նաև նոյն հեղինակի «Սամուէլը» գ. 3 բ. 50 կ. և միւս աշխատութիւնները:

Դիմել կանխավճարով՝ Баку, Оганесу Газанчіану. 5—10

Հարկաւոր է **Բօնիա-հայունի** *Բազումում:*

Պայմանների մասին դիմել Թիֆլիս, Միքայէլեան փողոց, 160, տուն Էմինովի: Իսկ Բագումում—Մօսկայա փողոց, տուն Լազարեանցի, բնակ. Սաֆարովի: ե. հ. 2—2

Այս օրերս լոյս կը տեսնի

1500 ՏԱՐԻ ԱՌԱՋ

(404—1904)

Հայոց տարեր գիտր:

Աշխ. Իսահակ Յարութիւնեանի

Ժողովրդական հրատարակութիւն:

2—3

Ծախվում է

ՄԱՐՈՒՈՂ ԾՐԱԳՆԵՐ

դրամա 3 գործ.

Հեղ. ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԲԷԼԵԱՆԻ

Գինը 50 կ.

Դիմել. Баку, Александру Абелянцу 3—10

Պատիւ ունենք *ծանուցանելու յարգելի հասարակութեան, որ Միջին-փողոցում կաթոլիկաց եկեղեցու հանդէպ բացել ենք մաքուր և հանրամատչելի գներով*

ՃԱՇԱՐԱՆ «ՇԱՄԻՐԱՄ»

Պատրաստվում է եւրոպական և ասիական կերակուրներ, քաղցրեղէններ և խմորեղէններ. նաև ընդունում ենք «ապօնեանոցներ» ամսականներ և բաց ենք թողնում տներում:

Ցարգանօր՝ Գասպար Տէր-Յովհաննիսեան, Խորէն Մարտիրոսեան 4—5

Երկու երեխաների *մօտ պահանջվում է Մօսկվայում հայերէն լեզուն լաւ իմացող մի հայուհի: Հասցէն. Աբաս-Աբադեան հրապարակ, տ. Միրիմանովի, բնակ. Շահնազարեանցի:*

3—3 *(շար. 2 անգ.)*

Իսկական ցելիւլեար Բաղդադեան տեսակի

ԾԵՐԱՄԻ ՍԵՐՄ

ԵՂԲԱՅՐՆԵՐ ՊԱՄԽԱԼԻԴԻՒ

իւրաքանչիւր արկղիկը 6 մսխալից:

Մի ակ ներկայացուցիչը

ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ա. Կ. ԶԱԽԱՐԻԱԴԻՍ

Ընդունում է նոյնպէս պատուէրներ մինչև ապրիլի 15-ը եկող տարվայ համար:

Հասցէն. Тифлисъ, Дворцовая ул., д. Сараджева, квартира № 6. *(հ. կ.)* 2—10

Дозволено Цензурою. Тифлисъ, 29-го января 1904 г. «Տպարան ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарьянца, Мих. пр. № 81.